**Արձանագրություն N 2**

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/1-Լ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22 փետրվարի 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Դուրգարյանը
անդամներ՝ Մ. Կարապետյանը, Լ. Դեմիրչյանը, Ջ. Բաբայանը, Ս. Սարգսյանը
քարտուղար՝ Լ. Հարությունյանը

**I. Հայտերի բացման մասին**

---

(Մ. Դուրգարյան)

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

| Չափաբաժնի համարը | Գնվելիք աշխատանքի | Հայտ ներկայացրած մասնակցի | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | անվանումը | գնային առաջարկը (առանց ԱԱՀ) | գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ) | Նախահաշվային գին |
| 1 | Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ | Դիզենպրոֆ ՍՊԸ | 17 490 000 | 17 490 000 | 5 000 000 |
| | | Սպեցմաշ ՍՊԸ | 9 660 000 | 11 592 000 | |
| | | ԱՁ Գրիգոր Այվազյան | 6 795 000 | 6 795 000 | |
| | | Ռեդինետ ՓԲԸ | 91 057 542.86 | 109 269 051.43 | |
| | | Էներգովեստ ՍՊԸ | 15 329 064.5 | 18 394 877.4 | |

22.02.2019թ.-ի ժ 12:00-ին հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանը ներկայացրեց բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատեց իրեն ներկայացված հայտերի ցուցակը:
Հայտերի վերաբերյալ պարզաբանումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**II. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին**

---

(Մ. Դուրգարյան)

Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) Մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ոչ ավտոմատ եղանակով ծանուցել Դիգենպրոֆ ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հետևյալ անհամապատասխանությունը՝ ներկայացնել հայտով ներկայացված փաստաթղթերի վավերացմանն /էլեկտրոնային թվային ստորագրության/ ուղեկցող լիազորագիրը:

բ) Սպեցմաշ ՍՊԸ, ԱՁ Գրիգոր Այվազյան, Ռեդինետ ՓԲԸ, Էներգովեստ ՍՊԸ մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատել բավարար:

գ) ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/1-Լ) ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 26.02.2019 թ.-ին, ժամը 12:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ. Խորենացու-3, 7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________________ Մ. Դուրգարյան

անդամներ՝ ____________________ Մ. Կարապետյան

____________________ Լ. Դեմիրչյան

____________________ Ջ. Բաբայան

____________________ Ս. Սարգսյան

քարտուղար՝ ____________________ Լ. Հարությունյան